Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.3-Մ3-6 Ավագ մասնագետ(2026-01-21)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչություն | Հետաղետային վերականգնման կառավարման բաժին | Ավագ մասնագետ, (27-33.3-Մ3-6)

1.2 Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը կամ Բաժնի մյուս ավագ մանագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. մասնակցում է հետաղետային վերականգնման ոլորտում Նախարարության քաղաքականության իրականացման համակարգման աշխատանքներին.
2. իրականացնում է հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող տեղեկատվության ամփոփման և վերլուծման աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում՝ կատարում ոլորտային ուսումնասիրություններ.
3. իրականացնում է հետաղետային վերականգնման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով առաջարկությունների ներկայացման աշխատանքներ.
4. իրականացնում է հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների մշակում.
5. մասնակցում է հետաղետային վերականգնման գործընթացներին ուղղված կարգեր, պլաններ, ուղեցույցներ, մեթոդական ձեռնարկներ և այլ փաստաթղթերի նախագծեր.
6. մասնակցում է հետաղետային վերականգնման ոլորտի միջազգային ծրագրերով նախատեսված աշխատանքին, համատեղ իրականացվող ծրագրերին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, քննարկումներին, սեմինարներին, այլ միջոցառումներին.
7. մասնակցում է տեխնիկական անվտանգության պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգեր.
8. մասնակցում է տեխնիկական անվտանգության ապահովման հետ կապված ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնելու աշխատանքներին.
9. մասնակցում է տեխնիկական անվտանգության ապահովման ոլորտում իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին:

Իրավունքները.

- ստանալ համապատասխան նյութեր հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող միջազգային փորձի ուսումնասիրությունների, հետազոտությունների վերաբերյալ.
- ստանալ համապատասխան նյութեր, հուշագրեր, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր՝ հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների մշակման աշխատանքների նպատակով.
- ստանալ կարծիքներ, առաջարկություններ, հաշվետվություններ համատեղ իրականացվող ծրագրերի, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների, խորհրդակցությունների, քննարկումների, սեմինարների ընթացքում քննարկվող խնդիրների վերաբերյալ.
- ընդգրկվել հետաղետային վերականգնման ոլորտի միջազգային ծրագրերով նախատեսված աշխատանքներին, համատեղ իրականացվող ծրագրերին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին.
- հավաքագրել շահագրգիռ մարմիններից Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներից համապատասխան նյութեր, մասնագիտական կարծիքներ, վերլուծել միջազգային փորձի ուսումնասիրությունները տեխնիկական անվտանգության պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգերի մշական նպատակով.
- հավաքագրել նյութեր, կարծիքներ՝ տեխնիկական անվտանգության ապահովման հետ կապված առաջարկություններ մշակելու և ՀՀ կառավարություն ներկայացնելու նպատակով:

Պարտականությունները.

- պատրաստել համապատասխան նյութեր, փաստաթղթեր հետաղետային վերականգնման ոլորտում Նախարարության քաղաքականության իրականացման, ոլորտի զարգացման, կատարելագործման և բարեփոխման գործընթացների իրագործման նպատակով.
- հավաքագրել և ներկայացնել առաջարկություններ հետաղետային վերականգնման ոլորտի վերաբերյալ.
- հավաքագրել և պատրաստել համապատասխան փաստաթղթեր, նյութեր (պլան-ծրագրեր, վարքականոնների վերաբերյալ ուղեցույցներ և այլն) հետաղետային վերականգնման ոլորտում Նախարարության քաղաքականության իրականացման նպատակով.
- ուսումնասիրել և պատրաստել հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող տեղեկատվություն և անհրաժեշտության դեպքում՝ ընդգրկվել ոլորտային անալիտիկ հետազոտությունների և ուսումնասիրությունների իրագործման աշխատանքներին.
- ուսումնասիրել և պատրաստել անալիտիկ վերլուծության արդյունքում հետաղետային վերականգնման գործընթացների իրագործմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերը.
- ուսումնասիրել և համադրել ՀՀ-ում տեխնիկական անվտանգության պահանջների ներդաշնակեցումը և համապատասխանությունը միջազգային պահանջներին.
- հավաքագրել և ուսումնասիրել ՀՀ կառավարություն ներկայացվող առաջարկությունները մշակելու նպատակով ստացված տեխնիկական անվտանգության ապահովման հետ կապված կարծիքները:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Փոփոխությունների կառավարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: